

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/7

1 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Հովակ և որդիներ» ՍՊԸ 25.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 13.01.2016 թ-ի թիվ 5102886 ակտի դեմ:

«Հովակ և որդիներ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ-ի հարկային հսկողության բաժնի աշխատակիցները համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 25.11.2015թ. թիվ 5102886 հանձնարարագրի «Հովակ և որդիներ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) 18.12.2015թ. իրականացրել են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյուքներով արձանագրվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի իբրև խախտում և 13.01.2016թ. կազմվել է համապատասխան թիվ 5102886 ակտը:

Թե Կոտայքի ՏՀՏ, թե ՀՀ ֆինանսների նախարարություն գրավոր ներկայացվել են առարկություններ, այն է՝ վերոնշյալ ակտի դեմ բողոքարկումը, սակայն Կոտայքի ՏՀՏ-ից առարկությունների վերաբերյալ որևիցե պատասխան չի ստացվել, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրությունը մերժվել է, որով խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածներով նախատեսված՝ համապատասխանաբար ձևական պահանջները չարաշահելու արգելքը և առավելագույնի սկզբունքը:

Կազմած ակտը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության կողմից չեն խախտվել ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն ամբողջությամբ շինծու է, չարամտորեն կազմված, հետևյալ պատճառաբանությամբ.

1. «Հովակ և որդիներ» ՍՊԸ-ն ՀՀ Կոտայքի մարզ, ք.Աբովյան 3 մ/շ, 13ա 6 հասցեում իրականացնում է մանրածախ վաճառք, որտեղ 18.12.2015թ. մոտավորապես ժամը 16:30 սահմաններում, որպես առօրյա սպառող-գնորդներ, երկու առանձին փուլերով, կատարվել են տարբեր ապրանքների գնումներ, որոնցից մեկը մոտավոր 1850 դրամի, իսկ երկրորդը՝ 2050 դրամի չափով: Բոլոր գնումների ժամանակ անմիջապես տրամադրվել են համապատասխան ՀԴՄ կտրոններ: Ավելին, գնումներ կատարելու ժամանակ այլ անձանց կողմից ևս կատարվում էին տարատեսակ գնումներ, որոնց դիմաց ընկերության կողմից տրամադրվել են համապատասխան ՀԴՄ կտրոններ:

2. Ակտում նշված հիմքը, որ 150 դրամ արժողությամբ պոլիէթիլենային պարկի գումարի դիմաց չի տրամադրվել ՀԴՄ կտրոն հիմնավոր չէ, քանի որ այն չի վաճառվել, այլ անհատույց, որպես ամանորյա նվեր, տրամադրվել է ընկերության հաճախորդ-գնորդին: Ընդ որում, պոլիէթիլենային պարկը տրամադրվել է գնումները կատարելուց և վճարումն ավարտելուց հետո, գնորդների խնդրանքով, արդեն խանութի ելքի դռան մոտ, որպես լրացուցիչ, ավելի տեսքով պարկ, գնված ապրանքներն անվտանգ տեղափոխման համար: Դրանով պայմանավորված տրամադրվել է նվերների թվին դասված պարկը:

3. Կոտայքի ՏՀՏ-ի աշխատակիցները որևիցե կերպով չեն հիմնավորել այն, որ ստացված պոլիէթիլենային պարկը գնվել է իրենց կողմից, այլ ոչ թե նվեր են ստացել:

4. Կոտայքի ՏՀՏ-ի աշխատակիցները որևիցե ապացույց, որևիցե հիմնավորում չեն ներկայացրել պոլիէթիլենային պարկը գնելու, դրա համար դրամ վճարելու փաստի

առթիվ: Գանգատում բերված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251 հոդվածի դրույթը:

5. Այն, որ ակտը անհիմն է, պայմանավորված է նաև նրանով, որ ընկերության կողմից երկու փուլերով առևտրի կատարման դեպքում տրամադրվել է ՀԴՄ կտրոն, որոնց հանրագումարը կազմում է մոտ 4000 դրամ, իսկ ընդամենը 150 դրամի կտրոնը իբր «թաքցվում է», առնվազն անտրամաբանական է, զուրկ որևիցե դատողությունից և իրականությունից: Ավելին, նվերի դեպքում ՀԴՄ կտրոն պահանջելը հանդիսանում է ինքնանպատակ, որի իրական նպատակը դա տնտեսվարողին պարտադիր տուգանելն է, այլ ոչ թե օրինական վարչարարություն իրականացնելը:

6. Կոտայքի ՏՀՏ-ի աշխատակիցներն անհիմն անտեսել են ընկերության իրավասու մարմնի կողմից արձակված ներքին իրավական ակտը, որով սահմանված է եղել ամանօրյա նվերների տրամադրման աշխատակիցների պարտականությունը, որն, ըստ էության, առաջնային ապացույցներից մեկն էր, ինչպես նաև անտեսվել է ընկերության աշխատակցի կողմից սկզբում բանավոր, իսկ հետո գրավոր տրված բացատրությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 72, 74, և 76-րդ հոդվածներով, ընկերությունը խնդրում է 13.01.2016թ. կազմած թիվ 5102886 ակտն ամբողջությամբ ճանաչել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 25.11.2015թ-ի թիվ 5102886 հանձնարարագրի համաձայն «Հովակ և որդիներ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 13.01.2016թ-ի թիվ 5102886 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, հարկային տեսուչ Տիգրան Կարապետյանը 18.12.2015թ-ին ժամը 16:50-ին ք.Աբովյան 3-րդ մ/շ 13ա 6 հասցեում գտնվող խանութից կատարել է գնում 150 դրամի չափով՝ գնելով 1 հատ պոլիէթիլենային տոպրակ, որի դիմաց վճարումը կատարել է կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահ Կարինե Գևորգյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողները ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 16:57-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 125.910 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 150 դրամը, ժամը 16:57-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 126.060 դրամ ընդհանուր գումարով: Տեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ կիրառման կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ թե Կոտայքի ՏՀՏ, թե ՀՀ ֆինանսների նախարարություն Ակտի դեմ գրավոր ներկայացվել են առարկություններ,

սակայն Կոտայքի ՏՀՏ-ից առարկությունների վերաբերյալ որևիցե պատասխան չի ստացվել, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրությունը մերժվել է՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածների դրույթները, հարկ է նշել հետևյալը.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը:

Վերոգրյալից հետևում է, որ Կոտայքի ՏՀՏ-ն ընկերության կողմից ներկայացված առարկությունների վերաբերյալ պատասխան տալու պարտավորություն չի կրել:

Ինչ վերաբերվում է ՀՀ ֆինանսների նախարարություն Ակտի նախագծի վերաբերյալ ներկայացված առարկություններին, ապա ՀՀ ՖՆ համապատասխան գրություններով ընկերությանը պատասխանվել է, որ Ակտի նախագծի վերաբերյալ առարկություններն անհրաժեշտ է ներկայացնել ստուգումն անմիջականորեն իրականացրած մարմնին: Միևնույն ժամանակ տեղեկացվել է, որ ակտի նախագծի հիման վրա կազմված ակտի հետ համաձայն չլինելու դեպքում, այն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով կարող է բողոքարկվել Հանձնաժողով: Մասնավորապես, նշված օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև ստուգման արդյունքում կազմված ակտը (այլ ոչ թե ակտի նախագիծը) երկու ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան չի նախատեսվում կարող են բողոքարկվել այն պետական մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում է (են) ստուգող անձը (անձինք), կամ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով, կամ դատարան:

Վերոգրյալից հետևում է, որ ընկերության կողմից ակտի նախագծի վերաբերյալ ներկայացված առարկությունները քննության առնելու և որոշում կայացնելու պարտավորություն ՀՀ ֆինանսների նախարարությունը, այդ թվում՝ Հանձնաժողովը, չի կրել:

Ակտի 1-ին կետով արձանագրված խախտման վերաբերյալ հարկ է նշել, որ քննարկման ընթացքում հարկային տեսուչ Տիգրան Կարապետյանը պնդեց, որ 18.12.2015թ-ին ժամը 16:50-ին ընկերության խանութից իր կողմից գնվել է 1 հատ պոլիէթիլենային տոպրակ, որի դիմաց կանխիկ վճարվել է 150 դրամ, որը, սակայն, չի մուտքագրել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը հիմնավորվել է ստուգող անձանց կողմից իրականացված համապատասխան գործողություններով: Մասնավորապես, գնումը կատարվելուց հետո ժամը 16:57-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև, կատարված վճարման արժեքը՝ 150 դրամը, մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը:

Չնայած վերոգրյալ փաստական հանգամանքների, ընկերության վաճառողը պնդում է, որ Ակտում հիշատակված պոլիէթիլենային տոպրակը ոչ թե վաճառվել է, այլ տրամադրվել է անվճար, որպես ամանորյա նվեր:

Ընկերության ներկայացուցիչներին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե տեսագրվում է արդյոք խանութի տարածքը, հնչեց դրական պատասխան: Առաջարկվեց Հանձնաժողովին ներկայացնել ստուգումը կատարվելու օրվա տեսագրությունը, սակայն ընկերության ներկայացուցիչները հայտարարեցին, որ այն չի պահպանվել: Հաշվի առնելով նշված հանգամանքն առաջարկվեց Հանձնաժողովին ներկայացնել վերջին երեք օրերի տեսագրությունները, ինչի վերաբերյալ ընկերության ներկայացուցիչները տվեցին համաձայնություն: Սակայն, մի քանի օր անց ընկերությունը գրավոր տեղեկացրել է, որ այդ տեսագրությունները ևս հնարավոր չէ տրամադրել:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եզրակացնում է, որ իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգմամբ հիմնավորվել է ընկերության կողմից ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների խախտման, այն է՝ կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը, որի համար և կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Նիստի ընթացքում ընկերության կողմից բերվել է միջնորդություն, որի համաձայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընկերության Ակտի դեմ բերված գանգատի վերաբերյալ 30 օրվա ընթացքում որոշում չընդունվելու հիմքով, ընկերության գանգատում բերված փաստարկները համարվում են ընդունված: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 24.02.2016թ-ին ընդունվել է թիվ 8 որոշումը, որով Ակտի դեմ բերված գանգատի քննության և որոշում կայացվելու ժամկետը երկարաձգվել է 15 օրով: Նշված որոշումն ընկերությանն է ուղարկվել 26.02.2016 թ-ին: Այսինքն, ընկերության միջնորդությունը՝ գանգատում բերված փաստարկներն ընդունված համարվելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 13.01.2016 թ-ի թիվ 5102886 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ